24.04.2018թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 103-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Այսօր համայն հայությունը նշում է Հայոց Ցեղասպանության 103-րդ տարելիցը:

Մեկ դարից ավելի հայ ժողովուրդն ապրում է իր հանդեպ գործած սարսափելի ջարդերի, տեղահանությունների ու կոտորածի հիշողությամբ և դրանց հետևանքները կրելով:

Մեծ Եղեռնը խլեց 1.5մլն. հայի կյանք, խլեց մեր պատմական հայրենիքը, մեր ժողովրդի երազանքներն ու նպատակները, սակայն չկարողացավ խլել ապրելու ոգին:

Հայ ժողովուրդն այսօր աշխարհին է ներկայանում վերածնված ու առավել կազմակերպված՝ կրելով իր պատմական հայրենիքի հիշողությունը:

Մենք ոգեկոչում ենք Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, միաժամանակ վերահաստատում Հայաստանի և հայ ժողովրդի պատրաստակամությունը՝ շարունակելու պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության վերահաստատման համար:

Հայ ժողովուրդը երախտապարտ է այն պետություններին, միջազգային կազմակերպություններին, որոնք ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ գործած ամենազազրելի ոճրագործություն, և այսօր էլ շարունակում են այդ գործընթացը:

Մեր հիշողությունը գին ունի և տասնամյակների ընթացքում այն ավելի է արժևորվել՝ ստանալով նոր հնչեղություն, իր շուրջն համախմբելով աշխարհի առաջադեմ մարդկությանը, ովքեր ներգրավված են մեր արդար պայքարում: Իսկ մեր պահանջը հստակ է՝ Հայոց Ցեղասպանությունը պետք է ստանա իրավական, քաղաքական և բարոյական գնահատական:

Հարգելի համաքաղաքացիներ

Ոգեկոչման և հիշատակի ապրիլյան այսօրը մեկ այլ խորհուրդ էլ ունի՝ լինել առավել համախմբված և միասնական:

Մենք հիշում ենք և պահանջում, և այդ հիշողությունն ու պահանջատիրությունը այլևս միայն հայ ժողովրդինը չէ. այն վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից և դարձել համամարդկային՝ իր շուրջը համախմբելով միլիոնների:

Հենց սա է մեր պայքարի հաջողությունը, որը լինելու է շարունակական և չընդհատվող:

Իսկ այսօր՝ ապրիլի 24-ին, մեր խոնարհումը բերենք 1915թ-ի անմեղ զոհերի հիշատակին՝ դառնալով միակամ, և վառ պահենք հիշատակը անմեղ զոհերի՝ շարունակելով ճշմարտության և արդարության վերականգնման ուղին և կառուցենք, հզորացնենք մեր երկիրը՝ համայն հայության հայրենիքը: